ՄՈՎՍԷՍ ԵՐԷՑ ԳՈՐԻՍԵՑԻ ԳՐՉԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ (ԺԷ. Դար)

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ
sasun-07@mail.ru

Սիւնեաց լեռնաշխարհի հնաւանդ ու հարուստ կենսագրութիւն ունեցող բնակավայրերից է Հաբանդ գաւառի Ձագեձորի կամ Վարարակնի լեռնահովտի բարձրադիր գոգաւորութեան վրայ, Վարարակն գետակի վերին հոսանք՝ Քրմագետ կամ Վերիշէն[1] վտակի ձախափնեայ կանաչապատ ձորամիջում եւ բլրալանջին ընկած Հին Գորիս (տեղացիների կողմից Երի Շէն, Վերին Շէն անուանուած)[2] գիւղը՝ հնահիմք Գորայք-Գորէս-Գորիս (Կյորէս)ը, որի տարեգրութիւնը անխզելիօրէն կապուած է Սիւնեաց պատմութեան հետ եւ կազմում է նրա մի մասը[3]:

Սիւնիքը, Հայաստանի միւս նահանգների նման, եղել է ռազմական բախումների թատերաբեմ՝ մեծապէս տուժելով նուաճողների ասպատակութիւններից եւ աւերիչ արշաւանքներից[4]: Այս ամէնով հանդերձ, Գորայք-Գորիս գիւղը հնարաւորինս կարողացել է պահպանել իր գոյութիւնը եւ շարունակել ծաւալել ազգային մշակութակերտ գործունէութիւն՝ հնուց անտի հանդիսանալով Հաբանդ գաւառի քաղաքակրթութեան բնօրրաններից: Հոգեւոր կեանքն ուղեկցուել է նիւթական մշակոյթի զարթօնքով, որին մեծապէս նպաստել է Հարանց կամ Սիւնեաց Մեծ Անապատի[5] եւ տեղի կրթական գործի հիմնադիր, խորահմուտ հոգեւորական Մովսէս Վրդ. Տաթեւացու[6] 1613ին հիմնած դպրոցի ազգաշահ եւ աստուածահաճոյ գործունէութիւնը[7]: Սիւնեաց Մեծ Անապատի շնորհիւ սկզբնաւորուած հոգեւոր-մշակութային շարժումը, քոյր մենաստաններում եւ գրչակենտրոններում շարունակել են Տաթեւացու ականաւոր աշակերտներն ու գրիչները[8], որոնք ծաւալել են բազմաբեղուն մշակութային գործունէութիւն:

Կրթամշակութային կեանքի այս վերելքի պայմաններում Գորայք-Գորիս գիւղի Ս. Գրիգորիս եւ Ս. Աստուածածին եկեղեցիներին կից հիմնուած ձեռագրատուն-դպրատներն[9] իրենց ռաբունապետերով ու գիտնական վարդապետերով աստիճանաբար դառնում են Սիւնիքի ԺԷ. դարի աչքի ընկնող հոգեւոր-մշակութային կենտրոններ, որտեղ ուսուցանուել է նաեւ գրչութեան եւ մանրանկարչութեան արուեստ: Այստեղ էին գործում ժամանակի նշանաւոր եւ անխոնջ գրիչներ, Հարանց Անապատի ճգնակեաց Բարսեղ Երէցը, որին Դաւրիժեցին բնութագրում է որպէս «*ընտիր եւ առաքինագործ աբեղա*»[10], Պետրոս քահանայի որդիներ՝ Յակոբ եւ Սարգիս քահանաները, Յովհաննէս Երէցը, շնորհազարդ գրիչ-ծաղկողներ Յովհաննէս Աբեղան եւ Մովսէս երէց Գորիսեցին, ովքեր քրիստոնէական կրօնի վարդապետութիւնն ուսուցանելուն զուգահեռ իրենց մեծ ու փոքր գործերով եռանդուն կերպով ծառայել են նաեւ ժողովրդի գրաւոր մշակոյթի ստեղծմանը[11]:

Գորայք-Գորիս գիւղի գրիչների ձեռագրական ժառանգութիւնը հնարաւորինս ամբողջական դարձնելու նպատակով սոյն յօդուածում պիտի անդրադառնանք նաեւ հայրենի եզերքից դուրս գրչագրուած մատեաններին, որոնք թէեւ ոչ-անմիջականօրէն, բայց իրենց ստեղծման պատմութեամբ կապուած են Գորայք-Գորիսի հետ: Այս առումով յատկապէս ակնառու է ժամանակի հռչակաւոր եւ արդիւնաշատ ծաղկող-գրիչներից Մովսէս երէց Գորիսեցու գործունէութիւնը:

ԿԵԱՆՔԸ

Երբ է ծնուել է Մովսէս Երէցը՝ չգիտենք, սակայն յայտնի է նրա ծննդեան վայրը՝ Գորիսը: Հաւանական է, որ սերել է քահանայ գրիչների տոհմից: Մաշտոցեան Մատենադարանում (ՄՄ) պահուող Հ^{դր} 8135 «Աւետարան»ում նրա թողած յիշատակարանում կարդում ենք. «*Որ եմ բնական ի յերկրի, Ձագածորոյն ի Գորիսի*»[12]:

Յաջորդ կենսագրական տուեալը հաղորդում է հենց ինքը՝ Մովսէսը, Ապահէն[13] գիւղի դպրատանը 1652ին գրչագրած եւ ծաղկած «Շարակնոց»ի յիշատակարանում, նշելով որ Դադիվանքի եւ Հայրավանքի (Մարդաղոնեաց) առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսի օրօք ընդունել է հոգեւոր կոչում՝ ձեռնադրուելով երէց[14]:

Մովսէսը այն բազմաշնորհ արուեստագէտներից է, ովքեր հմտօրէն տիրապետել են թէ՛ գրչութեան, թէ՛ ծաղկելու եւ թէ՛ կազմելու արուեստին: Նրա մանրանկարչական եւ զարդանկարչական արուեստն արժանի է առանձին ուշադրութեան, քանզի նրա վրձնած նկարազարդումներից (աւետարանիչների պատկերներ, կիսախորաններ, անուանաթերթեր, զարդագրեր, լուսանցազարդեր եւն.) շատերը թեմատիկ առումով ունեն ինքնատիպ մօտեցում, գունային իւրօրինակ լուծում, իւրաքանչիւր մանրանկարին ցուցաբերուած է ինչպէս ոճական, այնպէս եւ պատկերագրական անհատական մօտեցում: Հաստատապէս կարող ենք ասել, որ Մովսէսն իր շօշափելի ներդրումն ունի Հաբանդ գաւառի գրչութեան եւ մանրանկարչութեան ձեւաւորման ու զարգացման գործում, յատկապէս իր գործով օրինակ ծառայելով իր աշակերտներին:

Ուշագրաւ է, որ իր գրչագրած եւ ծաղկած ձեռագրերի յիշատակարաններում նա ամէնից քիչ իր մասին է յիշում, այն էլ միայն նուաստացնող մակդիրով, նոյնիսկ, երբ գեղեցկօրէն է գրչագրել ու ծաղկել մատեանը: Օրինակ, Մարտիրոս Խնձորեսկցի գրչի 1653/54ին ընդօրինակած «Աւետարան»ը ծաղկած եւ կազմած Մովսէսի ինքնագիր յիշատակարանում ասում է. «*Ձսակաւ ծրոդ բանիս զ*Մովսէս *զանպիտան էրէցս...*»[15]:

Մովսէս Երէցը չի ունեցել գործունէութեան հիմնական վայր: Ըստ իր ընդօրինակած, ծաղկած, վերանորոգած եւ կազմած ձեռագրերի յիշատակարանների՝ նա հիմնականում գործել է Տաթեւ, Ապահէն, Մոս, Տանձատափ եւ այլ գիւղերի գրչութեան դպրոցներում: Դժբախտաբար, անխոնջ

գրչի՝ ծննդավայրում ընդօրինակած, ծաղկած եւ կազմած ձեռագրերից մեզ ոչինչ չի հասել: Բացառուած չէ, սակայն, որ միքանի բեկորներ պատառիկների կամ պատառիկ-պահպանակների տեսքով պահպանուած լինեն:

Ընդհանրապէս, յայտնի իրողութիւն է, որ հայ միջնադարեան հոգեւոր-մշակութային կենտրոնների գործունէութիւնը յաճախ դադարում էր ասպատակութիւնների ու պատերազմների հետեւանքով: Դրանք իրենց հետ բերում էին նաեւ նիւթական ու հոգեւոր արժէքների ոչնչացում, ձեռագրական ժառանգութեան հսկայական կորուստներ եւն.: Այս առումով բացառութիւն չէր նաեւ Գորայք-Գորիս գրչութեան կենտրոնը:

Թէեւ Հայաստանի համար մեծ աղէտներ պատճառած թուրք-իրանական տեւական պատերազմներն աւարտուեցին 1639ի Մայիսի 17ին Կասր-է Շիրինի պայմանագրով, սակայն հալածանքները չդադարեցին ու շարունակուեցին նաեւ Շահ-Աբբաս Բ.ի (1642-66) շրջանում: Այս դէպքերն իրենց արտացոլումն են գտել հայերէն ձեռագրերի յիշատակարաններում: Գորայք-Գորիս գիւղի բազմերախտ գրիչներն իրենց ընդօրինակած մատեանների յիշատակարաններում լրացնելով մէկը միւսին, պարտք են համարել արժէքաւոր եւ հաւաստի տեղեկութիւններ հաղորդել ծննդավայրում 1640ականների սկզբներին պարսից իշխանութիւնների գործած վայրագութիւնների՝ գիւղի աւերման, կողոպուտի եւ տեղահանուած բնակչութեան՝ Արցախի Ծար գաւառի տարբեր վայրեր հարկադրական գաղթի մասին: Եւ իրօք, հարեւան Արցախ հայաշխարհն այն գլխաւոր վայրն էր, ուր պատսպարուելու եւ պաշտպանուելու յոյսով դիմում էին Գորայք-Գորիսի տարագրեալ գիւղացիները: Այդուհանդերձ, մաքառումներով լի այդ ժամանակաշրջանում եւս, գորիսեցի գրիչներն անգամ բնօրրանից հեռու, բազմաթիւ զրկանքներ կրելով, շարունակել են ձեռագրերի ընդօրինակման գործը՝ յիշատակարաններում հայրենասիրական բուռն տենչով մատնանշելով իրենց ծննդավայրը՝ «*ի գեղջէն Գորիսոյ*»[16]:

Յաւօք, 1650ականների կէսերին յաջորդող ժամանակները Մովսէս երէց Գորիսեցու կենսագրութեան առաւել մութ շրջանն են, քանի որ յիշատակարաններն այդ մասին լռում են: Պահպանուած սկզբնաղբիւրային տեղեկութիւններն արձանագրում են, որ փոքրիշատէ խաղաղութիւն հաստատուելուց յետոյ, տարբեր վայրերում հանգրուանած գորիսեցիները վերադարձել են հայրենի եզերք՝ Ձագեձորի հովիտ եւ շէնացրել աւերուած եւ թալանուած հնամենի բնօրրանը: Գիւղն աստիճանաբար ամրապնդւում եւ հզօրանում էր՝ դառնալով «Զանկազուրու գաւառ»ի՝ Տաթեւի վանքին հարկատու շէն ու գլխաւոր բնակավայրերից մէկը[17]: Հարազատ գիւղ են վերադառնում նաեւ գրիչները. վերստին կեանք են ստանում ամայացած գրչատները: Վերընձիւղւում է ձեռագրերի ընդօրինակման եւ նկարազարդման աստուածահաճոյ արուեստը:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի հարցի, որը կարեւոր նշանակութիւն ունի ինչպէս տեղահանուածների հարազատ գիւղ վերա-

դառնալու ժամանակը ճշտելու, այնպէս էլ Մովսէսի յետագայ գործունէութիւնը բացայայտելու տեսանկիւնից: Մովսէսը, հաւանաբար Տաթեւի վանքում, 1658ին զարդանախշել եւ կազմել է գրիչ Մինաս Աբեղայ Խոտանանցու Տաթեւի վանքում 1657ին ընդօրինակած «Աւետարան»ը[18]: Մատեանի բուն յիշատակարանում Մովսէսը չի թողել որեւէ յիշատակութիւն, փոխարէնը իր պատկերած Մատթէոս աւետարանչի մանրանկարի տակ թողել է հետեւեալ փոքրիկ գրութիւնը. *«Հնկարող սակաւ ծաղկանցս զՄովսէս յեղեռնագործս փարիսեցի, յիշել աղաչեմ ի Տէր. զյիշողքդ՝ յիշեալ լիցիք զՏեառնէ Աստուծոյ. թվ. ՌՃԷ (1658)»*[19]: Պատմական այս իրողութիւնը հաստատապէս յուշում է, որ տեղահանուածների տակաւ վերադարձը Գորիս տեղի է ունեցել 1650ականների կէսերից:

Հ. Ղեւոնդ Ալիշանի *Սիսական* աշխատութեան մէջ տեղ գտած մի տեղեկութեան համաձայն՝ Մովսէս Երէցը Տանձատափ գիւղում 1682ին սեղմ յիշատակարան է թողել նաեւ մէկ այլ «Աւետարան»ում. «*Յետ սակաւ ամաց (1682) Մովսէս երէց Գորիսեցի գրէ յայլում Աւետարանի սակաւապող յիշատակարան ինչ ի Տանատափ գեղջ, որ է Տանձատափն*»[20]: Սա բազմաշխատ գրիչ-ծաղկող Մովսէս Երէցի՝ առայժմ մեզ յայտնի վերջին կենսագրական տուեալն է:

ԳՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մովսէս Երէցից մեզ յայտնի ձեռագրական առաջին աշխատանքը թուագրւում է 1647ով: Ծար գաւառի Սոթք (Սոդք)[21] իշխանանիստ նշանաւոր բնակավայրի Ս. Աստուածածին եկեղեցում (կոդ. 1276)[22] Մովսէսը «*սրբամիտ, հեզահոգի եւ բարելի*» մահտեսի Երեմիա[23] միայնակեացի խնդրանքով ի յիշատակ վերջինիս ծնողներ Ապաւինի եւ Սալվինազի, 1647ին նորոգում է ոմն Խոնտքարի պատուէրով 1490ին Ալեքսիանոս Աբեղայի՝ Գարդմանքի Խորոտիք վանքում գրչագրած «Աւետարան»ը *(թերթ՝ 324, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, տող՝ 20, մանրանկարչութիւնը՝ աւետարանիչ 4: Պահպանակ՝ մագաղաթ 4, կազմը՝ կաշեպատ փախտակ դրոշմազարդ՝ խաչով, կոստղապատ, աստառը՝ դրոշմազարդ կտաւ)*[24]:

Բնագրի վերջում ազդարարելով ձեռագրի նորոգման աւարտի մասին, Մովսէսը յիշատակարանում թողել է բանաստեղծական ջերմ շնչով գրուած 44 տողից բաղկացած մի չափածոյ, որում իր ծննդավայրը մատնանշում է ներկայիս՝ Գորիս գրելաձեւով: Ահա չափածոյի այդ հատուածը.

Նորոգեցաւ յայսըմ փառի,
Եւ ի գանձի աստուածային,
Որ յորջորջեալ եւրս կոչի,
Աւետարան տեառն Յիսուսի:
Ձեռամբ փծուն մեղսամածի,
Եւ ի չընչին քարտօղարի,
Եւ լոկ անուամբըն յիրիցուի,
Մովսէս *տրուայ զանարժանի:*
Որ եմ բնական ի յերկրրի,
Ձագածորոյն *ի* Գորիսի,
Եւ եմ բնակեալ յօտարեկելի[25],
Եւ ի յերկիրրն Ծարայի:
Մայրաքաղաքըն[26] Սոթէի,
Հի եմ ծառայ Սբ. Մաշտոցի,
Է կատարող խընդրրուածի,
Եւ հովանի ամէն տեղի[27]:

Վերը նշեցինք, որ Գորայք-Գորիսի տեղահանուած բնակչութիւնը բռնել էր նաեւ մօտակայ Արցախ տանող ճանապարհը: Լեռնաշխարհի Ապաւէն գիւղում ապաստանելը հանգամանօրէն, յուզական գրաւիչ շեշտերով ու խոր կսկիծով է նկարագրում Մովսէսը, այս անգամ արդէն 1652ին Ապահէն գիւղի դպրատանը համաչափ ու մանր բոլորգրով ընդօրինակած, ծաղկած եւ միաժամանակ կազմած «Շարակնոց»ի (*թերթ՝ 406, նիւթը՝ թուղթ, մեծութիւնը՝ 12,2x9, գրութիւնը՝ միասիւն, տողերի քանակը՝ 19-20, կազմը՝ կաշեպատ փախտակ դրոշմազարդ, ասպառը՝ դրոշմազարդ կտաւ, մանրանկարչութիւնը՝ կիսախորան, կազմը՝ կաշեպատ սպուարաթուղթ՝ մետաղեայ խաչով*)[28] գլխաւոր եւ ընդարձակ յիշատակարանում, որում փաստացի տեղեկութիւններ են հաղորդուում ժամանակի իրադարձութիւնների, մասնաւորապէս՝ Գորայք-Գորիսին պարսից իշխանութիւնների կողմից պատուհասած աղէտի մասին:



Ծար գաւառի Սոթք մայրաքաղաքում 1647ին Մովսէս Երէցի նորոգած «Աւետարան»ի (1490) կազմի Ա. փեղկ
Մովսէս Երէցի ինքնագիր ձեռագիր յիշատակարանը (321բ-322ա), ՄՄ, ձեռ. Հ^{ր} 8135

Թախծով լեցուն եւ խորունկ վշտով է գրուած հեղինակի հայրենի գիւղի աւերման ու գաղթի նկարագրութիւնը: Ստորեւ կը մէջբերենք այդ յիշատակարանի պատմական մասից ընդարձակ եւ պերճախօս հատուած, որն իր բնոյթով միակ սկզբնաղբիւրն է այս իրադարձութեան մասին: Դառնալով գրչութեան հանգամանքներին՝ Մովսէսը մանրամասնում է.

> Արդ՝ գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ մեղապարտ Մովսէս սուտանուն իրիցոյ, որ եմք բնական ի յերկրէն Ղափանայ, ի միւս երկրէն Ծագաձորոյ, ի գեղջէն Գորիսոյ, զոր հասեալ բարկութիւնն Աստուծոյ ի վերայ մեր մեղացս. խօճայ մի եկեալ ի մեր գեօղն վասն զապրիշում [մետաքս - Գ. Ս.] առնելոյ, եւ սատանայ բնակեալ ի սիրտ խօճային ոչ կամեցաւ մնալն ի Գօրեսն, այլ ելեալ գնաց դէպի երկիրն Դիզակայ. եւ առաջնորդ եղեալ նմա մարդ մի այլ Դիզակայ: Եւ ի ճանապարհին ըմբռնեալ եղեն յաւազակաց, եւ առեալ ի նո[ց]անէ բազում ոսկի եւ արծաթ, զոր ունէին յինքեան /// մակին եւ զիւրեանքն սպաննեալ եղեն յաւազակացն եւ թաքուցեալ: Եւ շատ շրջեալ ընդանեացն իւրեանց եւ այլոց, ոչ կարացին յիմանալ զտեղին: Եւ ի նոցին պատճառէ եկեալ դիմեցին ի վերայ մեր եւ ասացին. հայք եւ // տաճիկք, եթէ ի յայսմ գեղջէ է գնացեալ խօճայն: Եւ ի յահէ նոցին փախըստեայ եղեալ՝ գնացաք յայլ յերկիր. եւ զյետամնացսն գեղին զումն ի գեօղն թալանեցին եւ զումն՝ ի ճանապարհին: Եւ ես՝ թաքօրս ի բարեաց գործոց, եկեալ հասա իյերկիրն Ծարայ, ի գեօղն որ կոչի Ապահէն[29]:

Ծար գաւառի Ապահէն գիւղում Մովսէս Երէցի ընդօրինակած եւ ծաղկած «Շարակնոց»ը (1652), կազմ՝ Ա փեղկ Կիսախորանանուանաթերթ (3ա): ՄՄ, ձեռ. Հ՚՚ 1626

Յիշատակարանը հետաքրքիր եւ ստոյգ բացատրութիւն է տալիս Գորայք-Գորիսում տեղի ունեցած մի աղէտալի իրադարձութեան լուսաբանման համար: Ձեռագրի բովանդակութիւնից հետեւում է, որ Դիզակ տանող ճանապարհին թուրք աւազակների կողմից ոմն վաճառական կամ էլ մահմետական պալատական պաշտօնեայ մի խոջայի սպանութեան առիթով, պարսից իշխանութիւնները, պատճառ բերելով այն անհեթեթ փաստարկը, որ եթէ խոջան Գորիսից է գնացել, ուրեմն մեղաւորը գորիսեցիներն են, ձեռնարկում են պատժիչ տմարդի գործողութիւններ՝ աւազակային յարձակման համար անհարկի կերպով վրէժ լուծելով Գորիսի խաղաղ ու անպաշտպան բնակչութիւնից: Ոչնչացման սպառնալիքի տակ բնակչութեան գրեթէ զգալի մասն՝ «ի յահէ նոցին» հարկադրաբար հեռանում է իր բնօրրանից եւ հետապնդումներից խուսափելու համար ժամանակաւորապէս հանգրուանում մօտակայ կամ հեռակայ գաւառների բնակավայրերում, իսկ գիւղը ենթարկւում է թալանի ու աւերման:

«Շարակնոց»ի յիշատակարանում գրիչը երախտիքի խօսքեր է նուիրել Դաղիվանքի (Խութավանք) եւ Հայրավանքի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոսին, որը մեծ աւանդ է ունեցել Մովսէս Երէցի հոգեւոր-կրթական դաստիարակութեան հարցում: Ինչպէս ասւում է յիշատակարանում. *«Աստուած զիւրանն արքայութիւն տացէ եւ [ը]նդ սբ. հայրապետացն դասեսցէ, որ սա ձեռնադրեաց [անա]ւրժանս, եւս առաւել շատ աշխատանք ունի ի վերայ իմ հոգեւոր, այլ եւ մարմնաւոր Աստուած զինքն անփորձ եւ անսասան պահեսցէ մինչ ի խորին ծերութիւն»*[30]: Այս յիշատակարանը Մովսէսը գրել է *«ի ժամանակս Պարսից նորընձայ* Փոքր ՇահԱպասին, *եւ ի հայրապետութեանն* Էջմիածնեա[յ] *հեզահոգի տէր* Փիլիպոսի *բազմահանճար եւ սրբազան կաթողիկոսի, եւ ի յԱղուանից հայրապետութիւն* Գրիգորի *քաջ եւ արի կաթուղիկոսի, եւ յառաջնորդութեանն ի յայսմ ուխտի ի տէր* Ստեփաննոս *արհեպիսկոպոսի, որ է սպասաւոր եւ ժրաճան հովիւ ի սբ.* Դաղի *վանիցն եւ* Մարդաղաւնեաց *Ս. Նշանին... Ի թուականութեանս Հայոց ՌՃԱ (1652) գրեցաւ, ծաղկեցաւ եւ կազմեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ...»*[31] (շարունակութիւնը բացակայում է):

ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մեծ արուեստագէտի յատկութիւն է նկարի, գոյնի, գրութեան ու գրանիւթի ներդաշնակ միասնութիւն ստեղծելը: Այդպիսին է Մովսէս Երէցը: Այդ ցոյց է տալիս վերոնշեալ «Շարակնոց»ը, որը նրա ծաղկազարդած արժէքաւոր եւ բարձրարուեստ գործերից եւ մանրանկարչական յարդարանքի հարստութեամբ հայ գրքարուեստի բացառիկ նմուշներից է: Նրանում ծաղկողը թեմատիկ մանրանկարներին՝ Յովակիմ եւ Աննա (1բ), Յարութիւն (161բ), կիսախորան (2ա, 162ա), գլխազարդ (13ա, 68բ, 130ա, 213ա, 266բ, 349ա), լուսանցազարդ (բուսական, յուշկապարիկ, տաճար, սափոր, խաչ), զարդագրութիւն (թռչնագիր եւ հանգուցագիր) տուել է պատկերագրական մի շարք ինքնատիպ լուծումներ[32]:

Մատեանի մանրանկարները Մովսէս Երէցի արուեստին, ոճին ու պատկերագրութեանը բնորոշ նմուշներ են: Ինչպէս, օրինակ, «Աւետման» տեսարանում թեւատարած հրեշտակը ծառի կոճղի մօտ գտնուող երկու հաւատացեալներին յայտնում է երկնքից՝ Աստծոյ խօսքը հասցնելով վերջիններիս: Կոճղի վրայ պատկերուած են կաքաւի երեք ձագեր, որոնք համարւում են առաքինութեան խորհրդանիշներ: Մի քիչ վերեւում երեւում է դէպի ներքեւ թռչող մոխրագոյն կաքաւ՝ բերանին ձագերի համար սնունդ: Մանրանկարը ներառուած է կարմիր գոյնով ներկուած շրջանակի մէջ:

Յայտնի է, որ մանրանկարչութեան հմայքը նրա գոյների մէջ է: Մովսէս Երէցի ստեղծագործութիւնում գերակշռում են վառ կանաչ եւ կարմիր, կապոյտ, մանուշակագոյն, դեղին, շականակագոյն, սեւ, սպիտակ գոյները: Գունային այս համադրութիւնն առանձնայատուկ հմայք է հաղորդում նաեւ սոյն մատեանին: Գունային գեղեցիկ համադրումներով են առանձնանում «անուանաթերթ», «ճակատազարդ» եւ «Համբարձում» մանրանկարները: Ձեռագիրն ունի բազմաթիւ լուսանցազարդեր: Ուշագրաւ են զարդանկարչութեան պատկերները՝ սիրամարգ, տաճար, ծաղիկ, խաչ՝ զարդանախշի վրայ, կենդանի եւն.[33]: Այս ձեռագիրը, որը վկայում է Մովսէսի բազմաշնորհ արուեստագէտ լինելու մասին, իրաւամբ կարող է համարուել նրա գլուխգործոցը:

Մովսէսը գեղեցիկ ու ճաշակով է պատկերազարդել, կազմել, փեղկին մետաղեայ ակնակուռ խաչ դրել նաեւ Մոս գիւղում Արցախի Ջրաբերդ գաւառի Մաղաւուզ գիւղից այդտեղ հաստատուած նորընծայ Թադեւոս Քինյ. Բաղիշեցու պատուէրով՝ որպէս բարի յիշատակ իրեն ու ծնողների, 1653/54ին Հաբանդ գաւառի Խնձորեսկ գիւղից գրիչ Մարտիրոս դպիրի վայելուչ ու մանր բոլորգրով ընդօրինակուած «Աւետարան»ը *(թերթ՝ 353, նիւթը՝ թուղթ, մեծութիւնը՝ 16x11,5, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, տողերի քանակը՝ 19, մանրանկարչութիւնը՝ աւետարանիչ 4, կիսախորան լուսանցազարդ, կազմը՝ կաշեպատ սպուարաթուղթ դրոշմազարդ, արծաթեայ խաչով, աստառը՝ դրոշմազարդ կտաւ)*[34]:

Մատեանի թեմատիկ նկարներն են Մատթէոս (8բ), Մարկոս (106բ), Ղուկաս (169բ), Յովհաննէս (270բ) աւետարանիչները, ունի անուանաթերթ-կիսախորան (9ա, 107ա, 170ա, 271ա)[35], լուսանցազարդ (բուսական, թռչուն, տաճար, խաչ), զարդագրութիւն (մարդագիր, կենդանագիր, թռչնագիր, հանգուցագիր). գոյները՝ դեղին, կանաչ, կապոյտ, մանուշակագոյն, սպիտակ[36]: Ձեռագրի յիշատակարանում Մովսէսը նշում է.

> Յայսմ աստուածաշուչ տառիս ցանկացող եղեալ ի հոգւոյն սրբոյ եռացեալ սիրասնունդ եւ սրբամիտ ողջախոհ եւ սրբասնեալ տէր Թադէոս նորընծայ քահանայն, որ եւ եբեր ետ զիս զանարժանս զիեքգս եւ զթշուառս զնուաստ անուն Մովսէս տրուպ եւեթ իրիցուկս եւ ես թաբուրս ի բարեաց գործոց մեղսամած մատամբս եւ կազմեցի զսուրբ Աւետարանս եւ զսակաւ յիշատակարանս ծրագրեցի[37]:

Մովսէս Երէցի պատկերազարդած յաջորդ ձեռագիրը մատենագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրած եւ գրիչ Շմաւոն երէցի ընդօրինակած Յայսմաւուրքն է (1660)[38]: Ստացող՝ Պաղտասար Թուրաք (*թերթ՝ 577, մեծութիւնը՝ 38x24,5, գրութիւնը՝ երկսիւն, բոլորգիր, տողերի քանակը՝ 34, կազմը՝ լաթապատ սպուարաթուղթ, մանրանկարչութիւնը՝ կիսախորան, լուսանցազարդ*)[39]: Թեմատիկ նկարներ՝ իւղաբեր կանայք եւ Գրիգոր Լուսաւորիչի դիմանկարը, կայ անուանաթերթ-կիսախորան, գլխազարդ, լուսանցազարդ (բուսական, թռչուն), զարդագրութիւն (թռչնագիր, հանգուցագիր). գոյները՝ ոսկի, կարմիր, կանաչ, նարնջագոյն, մանուշակագոյն, կապոյտ, շագանակագոյն, սեւ, սպիտակ[40]:

Ձեռագրի բուն յիշատակարանում Մովսէս Երէցը, ինչպէս նախորդ դէպքում, չի թողել որեւէ յիշատակութիւն, փոխարէնը իր պատկերած «իւղաբեր կանայք» մանրանկարի տակ թողել է մի փոքրիկ գրութիւն. «*Զնկարող սակաւ ծաղկանցս եւ պատկերացս* զՄովսէս *յեղեռնագործ իրիցուկս աղաչեմ յիշել ի կէր միով ողորմիս. զյիշողքդ յիշեալ լիջիք զկէր Աստուծոյ, թուին ՌՃԹ (1660)*»[41]:

Մովսէս Երէցից պահպանուել է նաեւ մի գրչագրուած Յայսմաւուրք (ԺԷ. դ.)[42]: Այն, որ ձեռագիրը Մովսէսի ձեռքի աշխատանքն է՝ հաստատւում է գրչի եւ նկարների ոճական նմանութեամբ: Մատեանը ունի գլխազարդ, լուսանցազարդ (բուսական, տաճար, թռչուն), զարդագրութիւն (հանգուցագիր, թռչնագիր). գոյները՝ մանուշակագոյն, կապոյտ[43]: Ձեռագրի յիշատակարանում կարդում ենք. «*Ողորմի Քրիստոս սրացողի գրոցս* Ինքնատ *քահանային մահդասուն եւ կողակցին իւրոյ* Մինային *եւ եղկելի* Մովսէս *գծողի, ամէն: ...եւ* Մովսէս *մեղսամակարդ գրչի ամէն*»[44]:

Հ. Ղեւոնդ Ալիշանի *Սիսական* աշխատութեան մէջ Մովսէս Երէցին վերագրուող «Աւետարան»ի յիշատակարանի բովանդակութիւնը քանի որ անյայտ է մեզ, ուստի Ալիշանի տեղեկութիւնից միանշանակ չի կարելի հետեւցնել, որ մատեանի հեղինակը Մովսէս Երէցն է: Սիւնիքում գրչագրուած եւ մեզ հասած ձեռագիր յիշատակարանների ընթերցումը եւս որեւէ

վկայութիւն եւ հաստատուն հիմք չտուեց մատեանն ամբողջութեամբ Մովսէս Երէցին վերագրելու, թէեւ *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարանի* հեղինակները անվերապահօրէն նրան են համարում ձեռագրի հեղինակ[45]: Ամենեւին չժխտելով գրչի՝ գուցէեւ Մովսէսին լինելու փաստը, արձանագրենք, որ որպէս արուեստաւոր գրիչ-մանրանկարիչ վերջինիս մասնակցութիւնն այս ձեռագրում անկասկած արտայայտուել է նկարազարդմամբ, թերեւս նաեւ նորոգմամբ եւ կազմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, Մովսէս Երէցի ձեռագրական ժառանգութեան մեզ յայտնի առաջին մատեանը թուագրւում է 1647ով, իսկ վերջինը՝ 1682ով: Յիշատակարանների ժլատ տեղեկութիւնների պատճառով չենք կարող ասել, թէ ինչպէս է ընթացել բազմաշնորհ գրիչ-ծաղկողի յետագայ ճակատագիրը եւ երբ է կնքել իր մահկանացուն:

Յիրաւի, Մովսէս Երէց Գորիսեցին դաստում է իր ժամանակի Սիւնիքի մեծագոյն գրիչ-ծաղկողների շարքին. նա շարունակեց իր նախորդների՝ Տաթեւի վանքի ԺԷ. դարասկզբի նշանաւոր գրիչ-ծաղկողներ՝ Մազման մականուամբ Տէր Սարգսի եւ վարպետաց վարպետ Տէր Մարտիրոս Հիւզանցու գրչագրական եւ մանրանկարչական աւանդոյթները[46]: Իր ընդօրինակութիւններով եւ բարձրարուեստ զարդանկարչութեամբ, նա մեծ աւանդ ունի հայ մշակութային ժառանգութեան մէջ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Քրմագետ կամ Վերիշէն վտակը Վարարակնի ձախ օժանդակն է: Սկիզբ է առնում Աղօթաքարի լեռնանցքի Քոռ աղբիւրից եւ Վերիշէն գիւղի մօտ միախառնւում մայր գետին: Երկարութիւնը 5 կմ. է (*Հայաստանի Հանրապետութեան Ֆիզիկաաշխարհագրական Օբեկտների Համառօտ Տեղեկատու-Բառարան*, Երեւան, Գէոդէզիայի եւ Քարտէզագրութեան Կենտրոն ՊՈԱԿ, 2007, էջ 135):

[2] Համապատասխանում է ներկայիս Վերիշէն գիւղին, որը գրեթէ միացել է Գորիս քաղաքին: 2016 Սեպտեմբերից մտնում է Գորիս համայնքի մէջ:

[3] Մատենագրական աղբիւրներում մինչեւ Ժ. դարը ըստ էութեան չարտացոլուած Գորայք բնակավայրը 10 դրամ-դահեկան հարկաչափով առաջին անգամ յիշատակւում է Ստեփաննոս Օրբէլեանի *Պատմութիւն Տանն Սիսական* երկի վերջում՝ «Սիւնեաց Երկոտասան Գաւառաց Հարկք Եկեղեցւոյ Ըստ Հին Սահմանին» (գլ. ՀԳ) Տաթեւի արքեպիսկոպոսարանին հարկատու գիւղերի ցանկում (Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ-Մատենադարան (ՄՄ), ձեռ. Հ՝ 6271, 335բ: Հմմտ.՝ Մկրտիչ Էմին, *Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական*, Մոսկուա, Տպ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուաց, 1861, էջ 375: Տեղին է նշենք, որ պատմագիտութեան մէջ վաղուց հաստատուած է, որ Օրբէլեանի հարկացուցակը կազմուել է Ժ. դարից ոչ ուշ, քանի որ նրանում Սիւնիքի բոլոր գիւղերը եւ նրանց սահմանները ներկայացուած են այդ ժամանակների դրութեամբ՝ «ըստ հին սահմանին» (Ս. Յակոբեան, *Հայ Գիւ-*

ղացիութեան Պատմութիւն (Վաղ Ֆէոդալիզմի Դարաշրջան), Գիրք Ա, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1957, էջ 323. նաեւ՝ Յ. Ութմազեան, *Սիւնիքը IX-X Դարերում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1958, էջ 233-4): Հարկացուցակի մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Գ. Գրիգորեան, «Դրամական Յարաբերութիւնների Զարգացումը Սիւնիքում եւ Օրբէլեանի Հարկացուցակի Խնդիրը», *Լրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1966:2, էջ 45-58:

[4] Մանրամասն տե՛ս՝ Հ. Նաջարեան, *Թուրք-Իրանական Յարաբերութիւնները XVI դ.ու XVII դ. Առաջին Կէսին եւ Հայաստանը*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1961. նաեւ՝ Մ. Մալխասեան, «1606-1609 թթ. Մեծ Սովը Հայաստանում», *Բանբեր Երեւանի Համալսարանի. Հայագիտութիւն*, 2017:2, էջ 48-59:

[5] Գտնւում է կրօնամշակութային կենտրոն՝ Տաթեւի վանքին մերձակայ, հին Հալիձոր գիւղի դիմաց, Որոտան գետի աջ ափին: Կառուցուել է 1608-13ին:

[6] 1629-32 կաթողիկոս Մովսէս Գ. Տաթեւացի:

[7] Մանրամասն տե՛ս՝ Ներսէս Ակինեան, *Մովսէս Գ. Տաթեւացի. Հայոց Կաթողիկոսն եւ Իր Ժամանակը*, Վիեննա, 1936, էջ 187-223:

[8] Գրիգոր Վարդապետ, Եսայի Վրդ. Մեղրեցի, Զաքարիա Վաղարշապատցի, Իսրայէլ Վրդ. Մեղրեցի, Խաչատուր Գրիչ, Խաչատուր Վրդ. Երնջակեցի, Ղուկաս Գրիչ, Ղուկաս Վրդ. Գառնեցի, Մելիքսէթ Երէց, Մինաս Երէց, Յակոբ Վրդ. Աստապատեցի, Յովհաննէս Աբեղայ, Յովհաննէս Արք. Տաթեւացի, Ռստակէս կամ Արիստակէս Վրդ. Շամբեցի, Փիլիպոս Աղբակեցի եւն. (Ակինեան, էջ 192-7, 213-23):

[9] Վիմագրական տուեալներով ձեռագրատները զանազան անուններ են ունեցել՝ գրատուն, նշխարատուն, նշխարախուց (Յ. Խալփախչեան, «Դպրոցներն Ու Գրատները Միջնադարեան Հայաստանում», *Էջմիածին*, 1964:Ա, էջ 25):

[10] Դաւրիժեցի, էջ 225:

[11] Տեղին է նշենք, որ Հաբանդ գաւառում գրիչների կողքին ձեռագիր մատեանների ընդօրինակմամբ աչքի են ընկել նաեւ գրչուհիները: Նրանցից էր ԺԷ. երկրորդ դարակէսին ստեղծագործած քոյր Էրինէն, որը Շինուհայրի Կուսանաց Անապատում 1673ին արտագրել է «Ատենի ժամգիրք»ը (Վ. Պետրոսեանց, «Հայրենական Մշակոյթի Պաշտպան Հայ Կանայք», *Էջմիածին*, 1981:Ժ, էջ 49):

[12] ՄՄ, ձեռ. Հ՚ 8135, 321բ:

[13] Ապահէն (այժմ՝ լքեալ) գիւղը գտնւում է Արցախի Հանրապետութեան Շահումեանի շրջանի հարաւային մասում, Եզնարածանց գիւղից 4 կմ հիւսիս-արեւմուտք՝ Դուտխու գետի ստորին հոսանքի ձախ ձորալանջին: Բնակավայրն առաջին անգամ յիշատակւում է 1214ին՝ Դաղիվանքի շինարարական արձանագրութեան մէջ: Եղել է Դաղիվանք-Խութավանքի վանքապատկան գիւղ (Սիմէոն Ջուղայեցի Կաթողիկոս, *Ջամբռ. Գիրք Որ Կոչի Յիշատակարան Արձանացուցիչ, Հայելի եւ Պարունակող Բնաւից Որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, եւ Իւրոյ Շրջակայից Վանօրէիցն*, Վաղարշապատ, 1873, էջ 283): Գիւղը յիշատակւում է նաեւ կալուածագիր-*սիկէլներում* (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V, Արցախ*, կազմ.՝ Ս. Բարխուդարեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982, էջ 216): ԺԳ. դ. վերջերին գիւղը հայաթափուել է: ԺԹ. դարից քրդաբնակների յորջորջումով գիւղանունը դարձել էր *Բենա*, Ի. դարասկզբից դառնալով թաթարաբնակ, յորջորջուել է՝ *Քիլիսալու* (Е. Кондратенко, *Карта Елисаветпольской Губернии с Показанием Сельских Обществ и Распледеления Населения по Вероисповедению* [Ե. Կոնդրատենկо, Ելիզաւետպոլի նահանգի քարտէզ. գիւղական համայնքները եւ բնակչութեան տեղաբաշխումը ըստ դաւանութեան, Թիֆլիս, 1888). նաեւ՝ Մ. Բարխուտարեանց,

Արցախ, Բագու, 1895, էջ 404. նաեւ՝ Մ. Տէր-Մովսէսեան, «Հայկական Արձանագրութիւններ», *Ազգագրական Հանդէս, Գիրք XXV*:2, Թիֆլիս, 1913, էջ 79. նաեւ՝ *Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V*, էջ 226. նաեւ՝ Ա. Յակոբեան, «Սիսականի Կոտակ եւ Արցախի Հարաւային Միւս Գաւառների Տեղորոշումն Ըստ «Աշխարհացոյց»ի», *Հանդէս Ամսօրեայ*, ՃԻԲ:11-12, Վիեննա-Երեւան, 2008, էջ 109-110. նաեւ՝ Ս. Կարապետեան, *Հայ Մշակոյթի Յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին Բռնակցուած Շրջաններում*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1999, էջ 72), որն իմաստային թարգմանութեամբ նշանակում է Եղցատեղ (Ս. Սարգսեան, *Արցախ. Պատմա-Աշխարհագրական Ճշգրտումներ*, Երեւան, «Հայ Էդիք», 1996, էջ 76): 1911ի ամռանը գիւղ այցելած Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեանը վկայում է, որ անտաշ քարերով կառուցուած թաղածածկ եկեղեցին գտնւում էր կանգուն վիճակում (Մ. Տէր-Մովսէսեան, «Հայկական Արձանագրութիւններ», էջ 79. նոյնի՝ *Հայկական Երեք Մեծ Վանքերի Տաթեւի, Հաղարծնի եւ Դադի Եկեղեցիները եւ Վանական Շինութիւնները*, Երուսաղէմ, 1938, Տպ. Սրբոց Յակոբեանց, էջ 99): Եկեղեցին կանգուն է եղել նաեւ 1960 Օգոստոսին արձանագրութիւններ հաւաքելու նպատակով վիմագրագէտ Բարխուդարեանի ղեկավարութեամբ գիւղ այցելած գիտարշաւի ժամանակ (*Դիւան Հայ Վիմագրութեան, Պրակ V*, էջ 226): Քարվաճառի շրջանի ամենամեծ եւ գեղատեսիլ այս գիւղը 1993ի գարնանը ազատագրելուց յետոյ վերանուանուել է Ապահէն («ԼՂՀ Վարչատարածքային Բաժանման Մասին» ԼՂՀ օրէնքում փոփոխութիւններ կատարելու մասին: http://nkrcadastre.am/?p=189) . 1993ի ամռանը հնավայր այցելած յուշարձանագէտ-պատմաբան Կարապետեանը գրում է. «*Հակառակ գիւղի պատմական հարուստ անցեալին՝ այստեղ հայկական հետքեր գրեթէ չեն պահպանուել*» (Կարապետեան, էջ 72):

[14] ՄՄ, ձեռ. Հմր 1626, 406բ. նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր. Գ.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 489:

[15] *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր. Գ.*, էջ 601:

[16] ՄՄ, ձեռ. Հմր 1626, 406ա-406բ. ՄՄ, Տիրայր վարդապետի արխիւ, թղթ. 120, վաւ. 1Ժ, էջ 917-918:

[17] Համաձայն Մատենադարանում պահուող մի ցուցակի, ԺԷ. դարի երկրորդ կէսին Տաթեւի վանքի իշխանութեան մէջ մտնում էր 14 գաւառ. «*Գեղուաձոր, Բաղաբերդ, Կաքաւաբերդ, Մաց, Աճանան, Դիլաբերդ, Մաղաջուղ, Բարկուշատ, Ջանկազոր, Քաշաթաղ, Չաւնտուր, Ղարադաղ, Վերի Ձոր եւ Սիսիան*» (*Մատենադարանի Պարսկերէն Վաւերագրերը, Պրակ II (1601-1650 թթ.)*, կազմ.՝ Յ. Փափազեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1959, էջ 46-7): Այդ 14 գաւառների մէջ ընդգրկուած էր 264 գիւղ (նոյն):

[18] Մինաս Աբեղայ Խոտանանցին մագաղաթեայ թղթի վրայ բոլորգրով «Աւետարան»ը ընդօրինակել է Ծղուկ գաւառի Շաղատ գիւղից ոմն Սիմէոնի պատուէրով: Մատեանը բաղկացած է 352 էջից: Գրիչը ձեռագիրն աւարտին է հասցրել 1657 Դեկտեմբերի 15ին (Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գրադարան, ձեռ. № 893, 335բ): Ձեռագիրն ինչ-ինչ ճանապարհով յետագայում հասել է Կարին (Էրզրում): Այն այժմ գտնւում է Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյի մէջ եւ պահւում է 893 համարի ներքոյ: Մատեանը Վիեննայի Մխիթարեան Միաբանութեանն է նուիրել Հայր Օ. Ամրիկ-

եանը՝ 1911ին, Կարինից՝ Գերապատիւ Գրիգոր Վրդ. Գովրիկեան Աբբահօր քահանայութեան յիսնամեայ եւ Վիեննայում Մխիթարեան Միաբանութեան հաստատման հարիւրամեայ յոբելեանների առթիւ (Մխիթարեան Միաբանութեան Գրադարան, ձեռ, № 893, 3ա): «Աւետարան»ի նկարագրութեան մէջ Մովսէս Երէցի մանրանկարչութեան արուեստի մասին Հայր Համազասպ Ոսկեանը գրում է. «*Զարդագիրք՝ սիրուն: Խորանք՝ գոյնզգոյն, լաւ: Լուսանցազարդք՝ շատ, գոյնզգոյն եւ բաւական յաջող: Նկարք՝ Մատթէոս, Յովհաննէս, բաւական յաջող, բայց գունաթափ*» (*Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին Ի Վիեննա, Հտր. Բ.*, կազմ.՝ Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1963, էջ 475): Մատեանի աւետարանիչների եւ յիշատակարանի էջերի պատճէնները սիրով մեզ է ուղարկել Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր Հայր Պօղոս Ծ. Վրդ. Գուճանեանը, որին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը:

[19] Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Գրադարան, ձեռ. Հ՝ 893, 4ա. նաեւ՝ *Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին Ի Վիեննա, Հտր. Բ.*, էջ 477. նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ժէ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր. Գ.*, էջ 755:

[20] Հայր Ղեւոնդ Ալիշան, *Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց Աշխարհի*, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 262:

[21] Սոթքը (Սաւդք) եղել է Սիւնեաց նահանգի գաւառներից. գտնւում էր Սեւանայ լճի արեւելեան մասում եւ Տրտուի վերնահովտում (Ս. Երեմեան, *Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»ի, (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ)*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1963, էջ 109, 117): Գաւառակենտրոնն էր Սեւանայ լճի հարաւարեւելեան ուղղութեամբ, Արցախի եւ լճի աւազան ջրբաժան բարձունքներում, Դուին-Պարտաւ ճանապարհի գլխաւոր հանգրուանում գտնուող Սոթք գիւղաքաղաքը (այժմ՝ գ. Սոթք): Խաչէնի տէր Սահլ Սմբատեանի իշխանութեան վերջին տարիներին (820-30ականների սկզբներ), Սոթքի տարածքը միացուել է վերջինիս իշխանութեան մէջ գտնուող Սիսականի Ոստան կամ Սիսականի Կոտակ, յետագայում Ծար անունը ստացած գաւառին եւ ընկալուել է իբրեւ մէկ ամբողջութիւն: Ըստ Վարդան Արեւելցու՝ «Սոթից գաւառն Ծարայ երկիրն է» (*Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի*, քննական հրատ.՝ Հ. Պէրպէրեան, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Փարիզ 1960, էջ 12): Դրանից յետոյ Տրտուի վերնահովիտը սկսում է կոչուել ոչ միայն *Ծար* եւ *Վերին Խաչէն*, այլ նաեւ *Փոքր Սիւնիք* (Մ. Սմբատեանց, *Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ Գաւառի, Որ Այժմ Նոր-Բայազիտ Գաւառ*, Վաղարշապատ, Տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1895, էջ 593. նաեւ՝ Ս. Բարխուդարեան, «Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի Իշխանութիւնները IX-X դդ.», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1971:1, էջ 72. նաեւ՝ Սարգսեան, էջ 30-41. նաեւ՝ Յակոբեան, «Սիսականի Կոտակ եւ Արցախի Հարաւային», էջ 116. նաեւ նոյնի՝ «Պատմա-Աշխարհագրական եւ Վիմագրագիտական», էջ 266-74): Ծար գաւառի Թադէի վանքի միաբան Յովհանիսիկ Ծարեցին իր ուսուցչի՝ Յովհաննէս Ծարեցու մահուան առիթով գրում է. «*Ի սոյն (1583) թուականի եղեւ վախճանք մեծ եւ երանաշնորհ վարդապետին մերոյ Յոհաննիսի: Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ, Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանիցն Թադէի Սուրբ յԱռաքելոյն...*» (*Մանր Ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., Հտր. Բ.*, կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1956, էջ 244):

Այնուհետեւ մինչեւ ԺԳ. դարը Սոթքը պատկանել է Ծարում իշխող Սահլ Սմբատեանի տոհմաճիւղին, ԺԳ.-ԺԶ. դարերին՝ Դուփեաններին, ԺԶ.-ԺԸ. դարֆերին՝ Մելիք-Շահնազարեաններին: Խորհրդային իշխանութեան տարիներին, երբ պատմական Ծար կամ Վերին Խաչէն գաւառը բռնակցուեց Ադրբեջանի Հանրապետութեանը, 1930 Օգոստոսի 8ին կազմաւորւում է *Քեալբաջար* (Քարվաճառ հայաթափ գիւղի անունով) վարչական շրջանը: Ադրբեջանական տիրապետութիւնից շրջանն ազատագրուել է 1993ի գարնանը: Ապրիլի 3ին ազատագրուել է վարչական կենտրոն Քարվաճառը (Սարգսեան, էջ 73. նաեւ՝ Կարապետեան, էջ 13):

[22] Սմբատեանց, էջ 625:

[23] Երեմիայի աւազանի անունը եղել է Եդկար, ուխտագնացութիւնից յետոյ կնքուել էր հինկտակարանեան չորս մեծ մարգարէներից մէկի անունով (*Հայերէն Ձեռագրերի ԺԷ Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ, էջ 262):

[24] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Բ, կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, խմբ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մնացականեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 680:

[25] Նշենք, որ յիշատակարանն առաջին անգամ հրատարակող Յակոբեանի մօտ թիւրիմացաբար բաց է թողնուած սոյն տողը, իսկ դրա փոխարէն կրկնուած է «*Եւ ի յերկիրըն Ծարայի*» տողը (*Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 261):

[26] Հայկական աղբիւրներում իշխանանիստ Սոթքը յիշատակւում է որպէս քաղաքագիւղ, գիւղաքաղաք, աւան, նոյնիսկ մայրաքաղաք (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 2*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 313):

[27] ՄՄ, ձեռ. Հմ 8135, 321բ: Հմմտ.՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 261:

[28] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ա., կազմ.՝ Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, խմբ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մնացականեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1965, էջ 595:

[29] ՄՄ, ձեռ. Հմ 1626, 406ա-406բ: Հմմտ.՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 488-9. նաեւ՝ *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ե., կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., ԵՊՀ Հրատ., 2009, էջ 682:

[30] ՄՄ, ձեռ. Հմ 1626, 406բ., նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1641-1660), Հտր.* Գ., էջ 489:

[31] Նոյն:

[32] Նոյն:

[33] Նոյն, 2բ. նաեւ՝ Ա. Գէորգեան, *Հայ Մանրանկարիչներ. Մատենագիտութիւն. IX-XIX դդ.*, Գահիրէ, 1998, էջ 450. նաեւ՝ Մ. Յարութիւնեան, *Մշակութային Կեանքն Արցախում 1639-1736 թթ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, 2018, էջ 115-6:

[34] *Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Հտր.* Ա., էջ 1056:

[35] ՄՄ, ձեռ. Հմ 3647:

[36] Նոյն. նաեւ՝ Գէորգեան, էջ 450:

[37] ՄՄ, ձեռ. Հմ 3647, 342բ. նաեւ՝ Գէորգեան, էջ 450:

[38] Ձեռագրի գրչութեան վայրը նշուած չէ: Հաւանաբար այն գրուել է Տաթեւի վանքում:

[39] *Յուցակ Ձեռագրաց Մաշկոցի Անուան Մատենադարանի, Հտր. Բ.*, էջ 272:

[40] ՄՄ, ձեռ. Հ՝ 6220, 1ա, 1բ, 2ա, 202ա, 264ա. նաեւ՝ Գէորգեան, էջ 451:

[41] ՄՄ, ձեռ. Հ՝ 6220, 1բ. նաեւ՝ Գէորգեան, էջ 451:

[42] Ձեռագրի գրչութեան վայրը նշուած չէ:

[43] Մատենադարան, ձեռ. Հ՝ 7495, 9ա, 126բ, 194ա, 205բ, 263բ, 265բ, 273բ. նաեւ Գեւորգեան, էջ 617:

[44] Մատենադարան, ձեռ. Հ՝ 7495, 17ա, 130ա, տե՛ս նաեւ Գեւորգեան, էջ 617:

[45] Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 5*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2001, էջ 32:

[46] *Հայերէն Ձեռագրերի ԺԷ. Դարի Յիշատակարաններ (1601-1620 թթ.), Հտր. Ա.*, կազմ.՝ Կ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1974, էջ 654:

THE MANUSCRIPT/SCRIPTURAL LEGACY OF MOVSES YERETS KORISETSI IN THE 17TH CENTURY

(Summary)

GEVORG STEPANYAN
sasun-07@mail.ru

The educational and cultural revival initiated by Movses Datevatsi in the monastery of Harants or Suniats Medz Anabad spilled over into the region as of the early 17th century, particularly in the art of manuscripts. One of the areas influenced by this wave was Korayk-Koris, which was located in the valley of Tsaketsor. Indeed, the art of manuscripts developed to such an extent from the 1720s to 1770 that Koris-Korayk became a unique center renowned for its illuminators and scribes.

The article focuses on one of the most talented illuminators and scribes of Korayk-Koris, Movses Yerets Korisetsi. The author examines the books Movses Yerets copied and illuminated, describes and evaluates them and constructs his biography and life, putting together the very scant information that Movses Yerets had noted on the margins of his copied books and their colophons.